ԴԱՍ 12.
Լցվել Սուրբ Հոգով

Ներածություն

Բանալի համարները

ՄԱՍ 12.1 Բաժակից խմելու անալոգիան

ՄԱՍ 12.2 Խնդրիր, և կտրվի

ՄԱՍ 12.3 Անկեղծ աղոթք

ՄԱՍ 12.4 Սուրբ Հոգով լցվելու արդյունքները

Հարցեր և քննարկումներ

Ամփոփում և կիրառություն

Աստվածաշնչյան ուսումնասիրություն

Լցվել Սուրբ Հոգով

Նշումների համար

Ներածություն

Եթե Տեր Հիսուսը, առաքյալները և առաջին դարի քրիստոնյաները կարիք ունեին լցվելու Սուրբ Հոգով, ապա մենք նույնպես (Ղուկ. 4:1,14, Գ. Առ. 2:2–4, 9:17, 19:6):

Երբ դառնում ենք քրիստոնյա, ստանում ենք Սուրբ Հոգին որպես կնիք, որը մեր փրկության գրավականն է (Եփես. 1:13): Փոխվելով հանդերձ՝ մեր հոգին վերածնվում է Սուրբ Հոգու միջոցով, և մենք ստանում ենք հավիտենական կյանք: Սուրբ Հոգով մկրտվելը մեզ հնարավորություն է տալիս կատարել Աստծո կամքը:

Թեև Հիսուսը մոր որովայնում հղիացել էր Սուրբ Հոգուց (Մատթ. 1:18), բայց Նա դեռևս կարիք ուներ լցվելու (կամ մկրտվելու) Սուրբ Հոգով, որպեսզի կատարեր այն գործը, որի համար Հայրն ուղարկել էր Նրան: Նա մկրտվեց Հորդանանի գետում (Ղուկ. 3:21–23): Աշակերտներին ասվել էր՝ մինչ ծառայության անցնելը սպասել Սուրբ Հոգու մկրտությանը (Գ. Առ.1:4–5, 2:2–4; Ղուկ. 24:48, 49):

Աստվածաշունչն այս լեցունությունը տարբեր կերպ է նկարագրում.

- Լցվել (Գ. Առ. 2:4):
- Մկրտվել (Գ. Առ. 1:5):
- Սուրբ Հոգու իջնելը (Գ. Առ.1:8):
- Սուրբ Հոգուն ընդունելը (Գ. Առ. 8:17):
- Սուրբ Հոգու հեղվելը (Գ. Առ. 10:45):

Ոչ թե արտահայտությունն է կարևոր, այլ այն, թե ինչ է տեղի ունենում իրականում: ***Մենք սպառազինվում ենք Աստծո կամքը կատարելու համար և դառնում ենք Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները:***

Պետք է հիշել, որ մկրտվելուց հետո կարիք ունենք շարունակաբար լցվելու (Եփես. 5:18):

Բանալի համարներ

Նշումների համար

Գ. Առ. 2:38–39
Հովհ. 7:37–39
Դուկ. 11:9–13
Եփես. 5:18

ՄԱՍ 12.1
Բաժակից խմելու անալոգիան

Ո՞եր կյանքը նման է բաժակի, որը ստեղծված է լցվելու և գործածվելու համար: Մենք արարված ենք Սուրբ Հոգու աղբյուր լինելու համար: Ամենուր, որտեղ Աստծո կյանքի ու զորության կարիքը լինի, ինչպես շտեմարաններ, ունենանք այնքան, որ կարողանանք հոգալ այդ կարիքները:

I) Կեղտոտ բաժակ

Դու երբեք կեղտոտ բաժակով ջուր չես հրամցնի: Մինչ բաժակը գործածելը պետք է այն մաքուր լվալա: Շատերը չգիտեն Սուրբ Հոգու զորության մասին, քանի որ իրենց կյանքը նման է կեղտոտ բաժակի: Սկզբում անհրաժեշտ է մաքրվել, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա մեր մեջ լցվել, քանի որ Սուրբ Հոգին նման է մաքուր, պարզ ջրի: Աստված Հիսուսի միջոցով հնարավոր է դարձրել մեր կյանքի կեղտոտությունը ամբողջությամբ մաքրելու: Մեզանից մի քանիսը բարեպաշտ ու գեղեցիկ են երևում արտաքնապես, բայց մեզանից յուրաքանչյուրը կարիք ունի մաքրելու իր սրտի խորքերը (Ա Թագ. 16:7):

II) Ճաքած բաժակ

Դուք միգուցե չեք էլ պատկերացնում ճաքած բաժակով ջուր տալ մեկին: Հավանաբար դեն նետեիք նման բաժակը, բայց Աստված երբեք այդպես չի վարվում: Նա նորոգում է ճաքը (Սաղմ. 34:19, Ես. 61:1): Շատ քրիստոնյաներ իրենց ոչ պիտանի, ստորադաս կամ էլ անապահով են զգում: Նրանք չեն կարողանում անկեղծ լինել որևէ մեկի հետ, քանի որ

Նշումների համար

գիտեն, որ իրենք կոտրված են՝ ճաքեր ունեն: Աստված իր զորությամբ և սիրով կարող է հպվել ու ամբողջացնել նրանց (Մատթ. 9:12): Երկրի վրա Հիսուսը իր ողջ ծառայության ընթացքում բժշկում էր հիվանդությունից, ցավից, մենակությունից ու վիրավորանքից կոտրված ու փշրված մարդկանց:

Աստված նույնը ցանկանում է անել մեզ համար: Նա կամենում է բերել բժշկություն, ներում և Սուրբ Հոգու միջոցով, խաչի զորությամբ լցնել մեզ Իր կյանքով ու կարողությամբ, որպեսզի շարունակենք ծառայել Հիսուսին մեր ժամերի մեջ և մեր օրերում (Հովհ. 14:12, 15:1–27):

III) Գլխիվայր շուռ տված բաժակ

Անշուշտ, գլխիվայր շուռ տված բաժակը չես կարող լցնել: Մեզանից է կախված: Մենք պետք է սրտաբաց, անկեղծ լինենք Աստծո համար, որպեսզի Նա լցնի մեզ: Մեր հոգիներում Աստծո Սուրբ Հոգուն ընդունելու փափագ պետք է լինի: Սուրբ Հոգին չի ստիպի մեզ, մենք պիտի մեր կյանքում Իր ուղին ընտրենք:

IV) Մաքուր բաժակ

Մաքուր բաժակներն են գործածելի: Նրանք լցվում են, որպեսզի կատարեն այն նպատակը, ինչի համար ստեղծվել են: Սա նաև իրական է մեր կյանքի համար: Մենք կստանանք Սուրբ Հոգու փառավոր պարգևները և կհայտնաբերենք, որ Աստված գործածում է մեզ՝ մեր շուրջը գոյություն ունեցող կարիքները հոգալու համար:

Բաժակը, որ երբեք չի լցվել հեղուկով, երբեք չի իրագործել այն նպատակը, ինչի համար որ ստեղծվել է: Այն մարդիկ, ովքեր իրենց կյանքում Սուրբ Հոգու միջոցով չեն ճանաչել Աստծո զորությունը, նույնպես երբեք չեն կատարել այն նպատակը, ինչի համար ստեղծված են:

ՄԱՍ 12.2
Խնդրիր, և կտրվի

Նշումների համար

Սուրբ Հոգու գործն է, որ մեր սրտերում ***Աստծո հանդեպ ծարավ զգանք*** (Սաղմ. 42:1,2): Սա Սուրբ Հոգին ստանալ ձգտելու պատճառ է հանդիսանում: Աստված մեզ հրավիրում է մոտենալ Իրեն (Ես. 55:1, Հովհ.7:37–39):

Աստված Իր Հոգին է տալիս, որ փառավորենք Իրեն: Մենք փառավորում ենք Աստծուն, երբ ***սիրով հնազանդվում ենք Իրեն***: Այդ պատճառով հնազանդությունը պետք է լինի մեր սրտերի դիրքը (Գ. Առ. 5:32):

Սուրբ Հոգին օգնում է գիտակցել, որ մեր կյանքում Իր զորության կարիքն ունենք: Եթե գիտես, որ քո կյանքում Իր կարիքն ունես, ***ինչո՞ւ չխնդրել Հորը***, որ լցնի քեզ Իր Սուրբ Հոգով: Մի՛ վախեցիր:

> *«Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ զորության ու սիրո և զգաստության»:*
>
> (Բ Տիմ. 1:7)

Անկեղծ եղիր առ Աստված, թույլ տուր Սուրբ Հոգու քամին փչի քեզ վրա: Եթե դու Աստծուց ես սպասում, Նա քեզ չար կամ վատ բան չի տա (Ղուկ. 11:9–13):

Կենտրոնացրու ուշադրությունդ Հիսուսի և Երկնային Հոր վրա, հետո բաց եղիր ընդունելու այն ամենը, որ նա կտա քեզ: Թույլ տուր, որ Սուրբ Հոգին սրբացնի քեզ ամբողջությամբ՝ հոգիդ, շունչդ ու մարմինդ (Ա Թես. 5:23): Թո՛ւյլ տուր Նրան՝ լցնելու քո կյանքը Աստծո զորությամբ: Ընդունի՛ր Նրանից այն պարգևները, որ Նա բերում է, և սովորի՛ր ինչպես երկրպագել, փառաբանել և վկայել Աստծո զորությամբ:
Եթե ուզում ես լցվել Սուրբ Հոգով, կարող ես աղոթել.

- Ինքնուրույն:
- Ինչ–որ մեկի հետ, որը գիտի, թե ինչ է նշանակում լցվել Սուրբ Հոգով:

Երբեմն ավելի հեշտ է աղոթել նրա հետ, ով գիտի այդ մասին (Գ. Առ. 8:17, 19:6): Պա՛րզ աղոթիր: Քո երկնավոր Հայրը կլսի քեզ և կպատասխանի, և կլցվես Սուրբ Հոգով: Կարևորը ոչ թե փորձառություն ունենալն է, այլ ***հավատքը, որ ունես Հոր խոստմունքի նկատմամբ***:

Նշումների համար

ՄԱՍ 12.3
Անկեղծ աղոթք

Անկե՛ղծ ու բա՛ց եղիր Աստծո համար: Եթե մեղքեր ես գործել, խոստովանի՛ր դրանք: Հետևյալ աղոթքը օրինակ է.

> «Երկնավոր Հայր, շնորհակալ եմ խոստումի համար, որ ով խնդրի՝ կստանա, և ով փնտրի՝ կգտնի: Ես գիտեմ, որ Քո զորության կարիքը է՛լ ավելի ունեմ: Գիտեմ, որ Սուրբ Հոգու պարգևների կարիքն ունեմ: Հա՛յր, խոստովանում եմ իմ մեղքերը Քո առջև: Ներում եմ բոլոր նրանց, ովքեր չարիք են գործել իմ նկատմամբ, և խնդրում եմ, որ մաքրես իմ կյանքը Քո Որդու արյունով: Ես դնում եմ իմ կյանքը Քո առջև ամբողջությամբ: Խնդրում եմ՝ լցնես ինձ քո Սուրբ Հոգու զորությամբ: Շնորհակալ եմ Քեզանից դրա համար, քանի որ Դու խոստացել ես: Հիսուսի անունով: Ամեն... »:

ՄԱՍ 12.4
Սուրբ Հոգով լցվելու հետևանքները

Երբ լցվում ենք Սուրբ Հոգով, այն ներգործում է ոչ միայն մեր, այլ նաև մեզ շրջապատող մարդկանց կյանքի վրա: Սա ակնհայտ երևում է Հիսուսի և նրա աշակերտների կյանքում :

> *«Եվ նրանք աղոթք անելիս շարժվեց այն տեղը, ուր որ հավաքված էին, և ամենքը Սուրբ Հոգով լցվեցան և **Աստծո Խոսքը խոսում էին համարձակությամբ**»* (Գ. Առ. 4:31):

Ի՞նչ արդյունք է ունենում մեզ համար.

Նշումների համար

- **Հիսուսի նկատմամբ:**
  Ավելին ենք ճանաչում, որ Հիսուսը նույնն է և կենդանի (Եբր. 13:8):

- **Աստծո նկատմամբ:**
  Փորձառաբար ապրում ենք Աստծո սերը մեր նկատմամբ (Հռովմ. 5:5) և նոր համոզում ենք ձեռք բերում Իր հարության մասին (Հռովմ. 8:15, Գաղ. 4:6): Ազատ ենք լինում սիրելու և փառաբանելու Նրան՝ վստահորեն և ուրախությամբ:

- **Աստծո Խոսքի նկատմամբ:**
  Աստվածաշունչը կարդալու նոր փափագ ենք ձեռք բերում: Բացահայտում ենք նաև, որ Աստված խոսում է մեզ հետ Իր Խոսքով: Խոսքը կենդանանում է և դառնում անձնական:

- **Հոգու նկատմամբ:**
  Մենք զգայուն ենք դառնում Իր ներկայության ու առաջնորդության հանդեպ (Եփես. 4:30, Հռովմ. 8:14), բաց ենք լինում՝ ընդունելու Հոգու պարգևները, և Հոգու պտուղը ակնհայտ է դառնում կյանքում:

- **Ուրիշների նկատմամբ:**
  Մենք ավելի անկեղծ ենք լինում մարդկանց հետ, ավելի սիրող և ձգտում ենք ակտիվորեն ներգրավված լինել եկեղեցու կյանքի մեջ, որը Քրիստոսի մարմինն է (Ա Կորնթ. 12:12–13):

- **Խոսքի նկատմամբ:**
  Մենք համարձակ ենք դառնում՝ վկայելու Քրիստոսի մասին (Գ. Առ. 1:8, 4:31):

- **Հոգևոր պատերազմի նկատմամբ:**
  Ավելի տեղյակ ենք լինում այն իշխանության մասին, որ ունենք թշնամու վրա Հիսուս Քրիստոսի մեջ, որ կարող ենք կանգնել և տեսնել Աստծո Թագավորությունը ընդարձակված (Եփես. 6:10–18, 1:17–23):

Նշումների համար

Հարցեր և քննարկումներ

Ժամանակ հատկացրու խորհելու յուրաքանչյուր հարցի շուրջ: Թո՛ւյլ տուր, որ Սուրբ Հոգին ասի, թե որ կետը կիրառես քո անձնական կյանքում:

1. Մի քանի կետեր, որոնք խոչընդոտ կարող են հանդիսանալ Սուրբ Հոգով լեցուն կյանք ապրելուն:
   - Անհնազանդությունը (Գ. Առ. 5:32):
   - Սխալ շարժառիթները (Գ. Առ. 8:18–24):
   - Հպարտությունը (Ա Պետ. 5:5):
   - Հավատքի պակասը (Եբր. 11:6):

   Ինչպիսի՞ խոչընդոտներ կան քո կյանքում, որոնք մասնավորապես կարող են խանգարել:

2. Առաջի՞ն անգամ է, որ կարիք ունես լցվել Սուրբ Հոգով, թե՞ *կրկին* լցվելու կարիքն է: Հարցրու դրա մասին երկնավոր Հորը, և Նա կտա քեզ պատասխան:

3. Ինչո՞ւ շատ քրիստոնյաներ կարծում են, որ իրենք կարիք չունեն լցվելու Սուրբ Հոգով:

4. Արդյո՞ք Աստված մեզ ռոբոտներ է դարձնում, երբ լցվում ենք Սուրբ Հոգով: Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում, երբ լցվում ենք Սուրբ Հոգով:

Պատասխաններ

Այս հարցերը պատասխաններ չունեն, քանի որ դրանք խիստ անձնական են:

Ամփոփում և կիրառություն

Նշումների համար

1. Սուրբ Հոգով շարունակաբար լցվելը կարևոր է, եթե ուզում ենք դառնալ Հիսուսի զորավոր աշակերտները և կատարել մեր երկնային Հոր կամքը:
2. Սուրբ Հոգով լեցուն կյանք չի նշանակում Սուրբ Հոգի ունենալ, այլ թե որքանն է ինձնից պատկանում Նրան:
3. Մարդիկ ստեղծվել են Սուրբ Հոգով լցվելու համար, որպեսզի Աստծո զորության անոթները լինեն:
4. Մենք պետք է պատրաստ լինենք որպես մաքուր, անկեղծ անոթներ, որպեսզի լցվենք Սուրբ Հոգով:
5. Հայր Աստված խոստացել է, որ ով խնդրի, Սուրբ Հոգին կստանա:

Աստվածաշնչյան հաջորդ՝ *Լցվել Սուրբ Հոգով* ուսումնասիրությունը, կօգնի մեզ իմանալ, թե ինչպես լցվել Սուրբ Հոգով:

Նշումների համար

Աստվածաշնչյան ուսումնասիրություն
Լցվել Սուրբ Հոգով

Կարևոր է, որ յուրաքանչյուր քրիստոնյա լցվի Սուրբ Հոգով: Տեր Հիսուսն ասաց.

> *«Առանց Ինձ չեք կարող ոչինչ անել»* (Հովհ. 15:5):
>
> *Սուրբ Հոգու անձի միջոցով Հիսուսը ներկա է լինում հավատացյալի մեջ:*

Երբ՝ լցվում ենք Սուրբ Հոգով, Նա մեր մեջ գործում է պտուղ բերելու համար: Առանց Սուրբ Հոգով լցվելու մենք չենք կարող պտուղ բերել:

Այս ուսուցման նպատակն է՝ բացատրել, որ Աստծո նպատակը քեզ Սուրբ Հոգով լցնելը կամ մկրտելն է: Հետևյալ կետերը կիրառության համար են.

- Աստծո նպատակը մարդկաց համար:
- Ով կարող է Սուրբ Հոգով մկրտվել:
- Մկրտության օրհնությունները:
- Ինչպես մկրտվել:

1. Համաձայն Ա Թես. 5:23–ի՝ Աստված ստեղծեց մարդուն.

   _____:

   Աստված ստեղծեց մարդկանց հոգով, որպեսզի նրանք կարողանան փոխհարաբերվել Սուրբ Հոգու հետ: Աստծո նպատակն էր, որ սա հավիտենական փոխհարաբերություն լինի: Ի՞նչ տեղի ունեցավ, երբ մարդը մեղք գործեց: Կարդա՛ Եփես. 2:1–3.

   _____

   _____

Աստված ուզում է մեզ հետ նոր սկիզբ սկսել Քրիստոսով: Համաձայն Հովհ. 3:1– 16–ի՝ ի՞նչ է կատարվում մեր հոգիների հետ, երբ վերստին ծնվում ենք.

_____

_____

_____

(տե՛ս նաև Ա Պետ. 1:3)

2. Սուրբ Հոգին նախևառաջ ի՞նչ է անում հավատացյալի կյանքում. Նա կենդանացնում է հավատացյալի հոգին: Քո բառերով, համաձայն Հռովմ. 8:16–ի, նկարագրի՛ր՝ որոնք են արդյունքները.

_____

_____

_____

Դու անձնապես ունե՞ս այս փորձառությունը:

- ❍ Այո:
- ❍ Ոչ:

3. Հավատքը աճում և մեր մեջ բացարձակ վստահություն է առաջացնում շնորհիվ նրա, որ մեր հոգիները փոխհարաբերվում են Աստծո Հոգու հետ: Սա ինչ–որ երևակայական վստահություն չէ, այլ մեր սրտերում խոր հավաստիացում Սուրբ Հոգու կողմից: Այդ միջոցով հաստատ իմանում ենք, որ մենք Աստծո զավակներն ենք և հավիտենական կյանք ունենք: Եփես.1:13–14–ում Պողոսը խոսում է հետևյալ փաստերի մասին: Լրացրո՛ւ բաց թողնված տողերը.

...որին էլ երբ հավատացիք խոստմունքի _____

_____

որ մեր ժառանգության _____ *է:*

Նշումների համար

Նշումների համար

4. ա) Ո՞ւմ հետ է խոսում Պողոսը Եփես. 5:18–ում.

_____

բ) Այս հավատացյալները տարբերվո՞ւմ են Եփես. 1:13–ի հավատացյալներից: Նշի՛ր ճիշտ պատասխանը.

○ Այո:

○ Ոչ:

գ) Եփես. 5:18–ում ո՞րն է Պողոսի ուղերձը հավատացյալներին.

_____

դ) Կարդա՛ Ղուկ. 24:49–ը.

- Ո՞ւմ հետ է այստեղ խոսում Հիսուսը:

_____

- Ինչի՞ն պետք է նրանք սպասեին:

_____

- Ինչո՞ւ:

_____

ե) Կարդա՛ Ղուկ. 3:21.22 և 4:14–19.

- Ի՞նչ պատահեց Հիսուսի կյանքում:

_____

- Ի՞նչ նպատակով:

_____

զ) Եփես. 5:18–ը նշանակություն ունեցա՞վ քեզ համար.

○ Այո:

○ Ոչ:

5. *Լցվել Սուրբ Հոգով* նախադասության մեջ հունարենում ***լցվել*** բառի վերաբերյալ կան 4 կարևոր էլեմենտներ, որ պետք է ուսումնասիրենք

- ***Պասիվ կարգ:*** Դու չես կարող ինքդ քեզ լցնել, միայն Աստված կարող է այդ անել :
- ***Ներկա ժամանակը:*** Դու պետք է լցվես հենց հիմա:
- ***Շարունակական գործողությունը:*** Կարիք ունես շարունակաբար լցվելու, սա միայն մեկ անգամով չէ:
- ***Հրամանը:*** Սա հրաման է: Քեզ հրամայում է, որ լցվես:

Այս 4 էլեմենտներից ո՞ր փաստն է քեզ համար կարևոր այս պահին.

_____

Ինչո՞ւ:

_____

_____

_____

Հովհ. 3:34–ում ասվում է, որ Հիսուսը լցվեց Սուրբ Հոգով *առանց սահմանափակումների:* Ամեն օր պետք է բացենք մեր կյանքը Աստծո Հոգու առջև՝ ինչպես Հիսուսն արեց:

6. Աստծո գործը կատարյալ է և նպատակային, որը գոհացնում է Իրեն: Երբ լցվում ենք Սուրբ Հոգով, կարող ենք ակնկալել հետևյալ օրհնությունները: Յուրաքանչյուր համարից հետո գրի՛ր այն օրհնությունները, որոնք նշված են.

ա) Գաղ. 5:22–23. _____

_____

_____

բ) Եփես.5:19–21. _____

_____

_____

Նշումների համար

Նշումների համար

գ) Ա Կորնթ.12:4–11, Հռովմ.12:6–8. _____

_____

_____

դ) Գ. Առ.1:8, 4:31, 14:3. _____

_____

_____

ե) Հովհ.16:13,14. _____

_____

_____

7. ***Ապրծո ամենամեծ փափագն է յուրաքանչյուր հավատացյալի լցնել Սուրբ Հոգով***: Հովհ.7:37, 38–ում կարդում ենք, որ Հիսուսը անհատապես հրավիրում է յուրաքանչյուրին: Սուրբ Հոգին ստանալու համար կան քայլեր: Դա մի ճանապարհ է, որը բաց է ցանկացած հավատացյալի համար: Ով քայլում է այս ճանապարհով, կարող է համոզված լինել, որ օրհնություն կստանա:

8. ***Քայլ առաջին:***
Հովհ. 7:37–ում գտնում ենք առաջին պայմանը: Լրացրո՛ւ բաց թողնված տեղերը.

Եթե _____

_____:

Հիսուսը հրավիրում է: Նա կանչում է: Միայն նրանք, ովքեր ***իրապես ծարավ են*** ապրում և ***փափագում են այդ ջրին***, կստանան խոստումը:

9. ***Քայլ երկրորդ:***
Այս քայլը կարող եք գտնել Գ. Առ. 2–ում Պետրոսի քարոզի ժամանակ, Պենտեկոստեի առաջին օրը: Հին Կտակարանից ո՞ր խոստումն է մեջբերում նա (17 և 18 համարներում):

_____

_____

38–րդ համարում Պետրոսը բացատրում է՝ ինչ պետք է անեն այս խոստումը ստանալու համար: Նրանք պետք է.

ա) _____

բ) _____

Ապաշխարել նշանակում է այլևս մեղք չգործել: Ապաշխարելը մեղքը խոստովանելուց ավելին է: (Առակ. 28:13) ***Մկրտությունը*** դրա հրապարակային խոստովանությունն ու վկայությունն է: Այն նշանակում է թողնել հին կյանքը, շարունակաբար ապրել նոր կյանքը:

10. ***Քայլ երրորդ:***
Երկրորդ քայլը ***պետք է շրջվենք***, երրորդ քայլը՝ ***վերադառնանք***: Կարդա՛ Հռովմ. 6:11–13 և լրացրո՛ւ բաց թողնված խոսքերը.

Նույնպես էլ դուք _____

_____ *մեռած* _____ *և*

_____:

Սրա համար թող _____

_____ *մեջ, որ* _____:

Եվ ձեր _____

_____ *մի ներկայացրեք* _____

այլ _____

*ներկայացրեք*_____, *և*

_____ *գործիք* _____:

Այս երրորդ քայլը քո ***նվիրման*** քայլն է՝ հնազանդվելով ապրել Աստծո կամքի համաձայն:

Գ. Առ. 5:32–ում ի՞նչ է Աստված խոստանում բոլոր նրանց , ովքեր հնազանդվում են Իրեն:

_____

11. ***Քայլ չորրորդ:***
Աստծո խոստումները ստանում ենք շնորհքի միջոցով: Նա ասում է յուրաքանչյուր խոստումի համար անդադար աղոթել, որպեսզի դրանք իրականանան մեր կյանքում: Կարդա՛ Ղուկ.11:13–ը և նկարագրի՛ր չորրորդ քայլը.

Նշումների համար

Նշումների համար

Աստված կամենում է, որ ***աղոթենք հատկապես Սուրբ Հոգով մկրտվելու համար:***

12. ***Քայլ հինգերորդ:***
Չորրորդ քայլը կատարելուց շատերը ակնկալում են մասնավոր զգացումներ՝ որպես ապացույց, որ մկրտվել են Սուրբ Հոգով: Փորձառությունը կամ զգացումները չպիտի մեր հիմքերը լինեն: Աստված այնքան էլ հետաքրքրված չէ քեզ զգացումներ տալով: Նա առավել տեսնում է.

Կարդա՛ Մարկ.11:24–ը և Գաղ. 3:14–ը.

Փորձառությունը միգուցե հենց այդ ժամանակ տեղի ունենա, բայց առաջնային, ինչ փնտրում է Աստված՝ հավատքն է: Երբ հավատքով ենք աղոթում, միգուցե նաև շնորհակալություն հայտնենք Աստծուն խոստումը իրականացնելու համար՝ ուշադրություն չդարձնելով մեր զգացմունքներին (Ա Հովհ. 5:14): Ժամանակի հետ միասին Սուրբ Հոգով լցվելու օրհնությունները տեսանելի կլինեն, որի մասին նշվել է վեցերորդ հարցում:

13. Ո՞վ է մկրտում Սուրբ Հոգով.

Կարդա՛ Մարկ. 1:8, Հովհ. 1:33, 7:37.

Եթե ուզում ենք լցվել Սուրբ Հոգով, ***մեր ուշադրությունը պետք է կենտրոնացնենք Հիսուսի վրա:***

14. Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Գառը, ուզում է լցնել քեզ Աստծո Հոգով: Ընտրությունն կատարիր հիմա և նշիր.

- ❍ Ես ուզում եմ լցվել առաջին անգամ:
- ❍ Ես ուզում եմ լցվել նորովի:

Բա՛ց արա քո սիրտը Աստծո առջև, թո՛ւյլ տուր, որ Սուրբ Հոգու քամին փչի քեզ վրա: Բա՛ց եղիր այն ամենի համար, որ Նա կտա քեզ: Թո՛ւյլ տուր Նրան՝ սրբացնելու քեզ ամբողջությամբ՝ քո հոգին, շունչն ու մարմինը: Թո՛ւյլ տուր, որ լցնի քո կյանքը Աստծո զորությամբ: Ընդունի՛ր պարգևները, որ Նա ուզում է քեզ տալ, և սովորի՛ր փառաբանել, երկրպագել և Սուրբ Հոգու զորությամբ վկայել:

Պատասխաններ

Նշումների համար

1. Հոգով:
   Մարդկային հոգին մեռավ Աստծո համար, մարդը մեռավ հոգևորապես:
   Մեր հոգին նորից կենդանացավ Սուրբ Հոգու միջոցով:
2. Փոխհարաբերություն է սկսվում մեր և Աստծո Հոգու միջև:
   Անձնական նկատառում:
3. Սուրբ Հոգով կնքվեցիք, գրավը:
4. ա) Հավատացյալների:
   բ) Ոչ:
   գ) *«Լցվիր Սուրբ Հոգով»*:
   դ) • Իր աշակերտների:
   • Խոստացված Սուրբ Հոգուն:
   • Վերից զորություն հագնելու համար:
   ե) • Հիսուսը մկրտվեց Սուրբ Հոգով:
   • Տե՛ս Ղուկ. 4:18,19:
   զ) Անձնական նկատառում:
5. Անձնական նկատառում:
   Անձնական նկատառում:
6. ա) Հոգու պտուղը – տե՛ս Աստվածաշնչում:
   բ) Ուրախություն, երկրպագություն, գոհունակություն, նվիրվածություն:
   գ) Հոգու պարգևները:
   դ) Զորություն և համարձակություն՝ վկայելու:
   ե) Սուրբ Հոգով մենք կփառավորենք Հիսուսին:
8. Մեկը ծարավ է:
9. Աստված Իր Հոգին կթափի:
   ա) Ապաշխարեն:
   բ) Մկրտվեն:
10. Տե՛ս Աստվածաշունչը:
11. Անձնական նկատառում:
12. Հավատքը:
13. Հայր Աստված և Հիսուսը:
14. Անձնական նկատառում:

ՀԻՍՈՒՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ
ՍՈՎՈՐԵԼ ԱՊՐԵԼ ՀԻՍՈՒՍԻ ՆՄԱՆ

Դոկ. ԲՈԲ ԳՈՐԴՈՆ

ՀԻՍՈՒՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Սովորել ապրել Հիսուսի նման

Երեք գրքերից բաղկացած այս հատուկ շարքը առաջարկում է նոր մոտեցում քրիստոնեական բոլոր ոլորտների աճի և զարգացման համար: Այն իդեալական է անձնական կամ խմբակային գործածության համար, և հրաշալի կլիներ, որպես հետևողական գործիք՝ այն դարձնել մի «Ալֆա կուրս», որով հիմա առաջնորդվում են աշխարհի շատ երկրներում:

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Մատչելի ձևով ներկայացված հիմնարար ուսուցումներ

Պարզ երկխոսական ֆորմատ

Անմիջական, մարտահրավեր նետող և խթանող մոտեցում

Աստվածաշնչյան լրացուցիչ ուսումնասիրություններ՝ և՛ անձնական, և՛ գործնական

Անդրադարձական ոճ, որը ուսանողին հեշտ գնահատականի հնարավորություն է տալիս

Դասընթացը սկսվում է ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ–ով, որտեղ դիտարկվում են քրիստոնեական աշակերտության առաջին անհրաժեշտության որոշ հիմնական հարցեր, հետո շարունակվում է ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ–ում, որտեղ քննարկվում են ծառայության որոշակի կարևոր սկզբունքներ, և գագաթնակետին է հասնում ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ–ում՝ Աստծո կանչին և ճշմարիտ հոգևոր ծառայության էությանը վերաբերող կենսական կարևոր հասկացություններով:

Դոկ. Բոբ Գորդոնը շոտլանդացի է, որն իր կյանքի մեծ մասը ապրել և ծառայել է Անգլիայում: Նա ավարտել է Մանչեստրի Աստվածաշնչյան Ուսումնասիրությունների Համալսարանական Դպրոցը և կրում է նաև Աստվածաբանության և Կրոնական Կրթության Ասպիրանտի աստիճանը: Այժմ նա առաջնորդում է Նորվիչում (Մեծ Բրիտանիա) հիմնված Միջազգային Ավետաբերների Գործը: Ամբողջ աշխարհում առաջացած պահանջը լրացնելու մեջ, որպես Աստվածաշնչի միջազգային ուսուցիչ, նա բարեբեր հեղինակ է աշխարհի շատ լեզուներով թարգմանված իր գրքերի մեծամասնությամբ:

A SOVEREIGN WORLD INTERNATIONAL BOOK
Published in co–operation with Proclaimers